Արձանագրություն N 2

ՀԾԿՀ-16/4-ՇՀԱՊՁԲ-15/11 ծածկագրով էլեկտրոնային ձևով շրջանակային համաձայնագրերի միջոցով տնտեսական, սանհիգիենիկ և լվացքի միջոցների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

01 հունիսի 2016 թ.
ժամը 10:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լիլիթ Մկրտչյանը, անդամներ՝ Ջուլիետա Բաբայանը, Սմբատ Աղաբայանը, Մեսրոպ Ղարիբյանը, Ջուլիետա Գրիգորյանը, քարտուղար՝ Վարդան Նավասարդյանը:

Օրակարգ

Հայտերի բացման մասին

ՀԾԿՀ-16/4-ՇՀԱՊՁԲ-15/11 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Լիլիթ Մկրտչյանը նիստը հայտարարեց բացված և տեղեկացրեց, որ հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին՝

- հայտ են ներկայացրել ներքոհիշյալ մասնակիցները՝

Հ/Հ	Մասնակցի անվանումը և գտնվելու վայրը			
	Ա/Ձ Վահրամ Հակոբյան ՀՀ. ք. Երևան, Շենգավիթ, Եղ. Թադևոսյան փ. 13/1,13	«ԷԿՈՄԻՔՍ» ՍՊԸ ք. Երևան, Լենինգրադյան 31/1 բն. 28	«ԷԼԻՊՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ ք. Երևան, Լենինգրադյան 23/13 մուտք 2, 50	Ա/Ձ Ռուզաննա Հովհաննիսյան ք. Երևան, Զաքարիա Քանաքեռցու 123/2, բն. 20
	ԱԱՀ վճարող չի	ԱԱՀ վճարող	ԱԱՀ վճարող	ԱԱՀ վճարող չի
	Գնային առաջարկը/ՀՀ դրամ, առանց ԱԱՀ/			
1	-	1650 ԵՏՄ	1283	2475
2	18500	-	204167	-
3	-	3300 ԵՏՄ	3750	6700
4	-	29667 ԵՏՄ	18750	23300
5	-	5800	8167	5500
6	-	105000 ԵՏՄ	108333	163000
7	-	18267 ԵՏՄ	8167	-

Հանձնաժողովը ուսումնասիրեց և արձանագրեց, որ՝

- հայտերում /բացառությամբ «ԷԼԻՊՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի և «ԷԿՈՄԻՔՍ» ՍՊԸ-ի/, առկա են պահանջվող փաստաթղթերը, որոնք կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Հանձնաժողովը արձանագրեց, որ

- «ԷԼԻՊՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հայտում բացակայում է Հավելված 4.1-ը և Հավելված 3.1-ում որպես նմանատիպ պայմանագիր ներկայացվել է շինանյութերի մատակարարման պայմանագիր, այնինչ հրավերով որպես նմանատիպ սահմանվել է տնտեսական, սանհիգիենիկ և լվացքի միջոցների մատակարարման պայմանագրերը:
- «ԷԿՈՄԻՔՍ» ՍՊԸ-ի հայտում Հավելված 3.1-ը լրացված է հրավերի պահանջների խախտմամբ, մասնավորապես հայտարարության մեջ չի ներառվել «Ընդ որում՝դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման

ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից» նախադասությունը:

Ելնելով վերոգրյալից հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և «ԷԼԻՊՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին ու «ԷԿՈՄԻՔՍ» ՍՊԸ-ին տեղեկացնել և առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի նիստը վերսկսել 2016թ. հունիսի 3-ին ժամը 11:00-ին, ՀՀ ք. Երևան, Սարյան 22 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ	_____	Լիլիթ Մկրտչյան
անդամներ	_____	Ջուլիետա Բաբայան
	_____	Սմբատ Աղաբայան
	_____	Մեսրոպ Ղարիբյան
	_____	Ջուլիետա Գրիգորյան
քարտուղար	_____	Վարդան Նավասարդյան